

Հավելված  
Հաստատված է  
Հայաստանի Հանրապետության  
հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի  
2016 թվականի ապրիլի 14-ի  
№80L որոշմամբ

## **ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

Երևան 2016

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Նախաբան</b>	<b>3</b>
<b>Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղությունները</b>	<b>5</b>
1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում	5
2. Սակագնային քաղաքականություն	7
3. Լիցենզավորում և լիցենզավորված անձանց պայմանագրային հարաբերությունների կարգավորում	10
4. Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ	10
5. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում և գնումների մոնիթորինգ	12
6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն	14
7. Հանձնաժողովի հիմնական գործունեության ընթացիկ ուղղություններ	16
<b>Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության ոլորտային ուղղությունները</b>	<b>18</b>
1. Էներգետիկայի բնագավառ	18
2. Ջրային ոլորտ	22
3. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ	23
<b>Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ</b>	<b>28</b>

## Նախաբան

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային ոլորտում կարգավորող մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «էներգետիկայի մասին», «էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) 2015 թվականին գործել է հետևյալ կազմով.

Ռոբերտ Նազարյան՝ հանձնաժողովի նախագահ  
Շիրազ Կիրակոսյան՝ հանձնաժողովի նախագահի տեղակալ  
Սամվել Արաբաջյան՝ հանձնաժողովի անդամ  
Մուշեղ Կոչեցյան՝ հանձնաժողովի անդամ  
Արթուր Վարդանյան՝ հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպել է աշխատակազմի միջոցով, որն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

- սակագնային քաղաքականության վարչություն,
- ֆինանսական վերլուծության վարչություն,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն՝
  - իրավաբանական և դատական սպասարկման բաժին,
  - լիցենզավորման բաժին,
- զարգացման և մոնիթորինգի վարչություն՝
  - տեխնիկական բաժին,
  - տնտեսագիտական բաժին,
- հեռահաղորդակցության վարչություն՝
  - կարգավորման քաղաքականության բաժին,

- ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժին,
- դիմում-բողոքների քննարկման և նիստերի նախապատրաստման բաժին,
- տնտեսական բաժին,
- անձնակազմի կառավարման բաժին,
- հաշվապահական հաշվառման և սոցիալական ծրագրերի իրականացման բաժին,
- ներքին աուդիտի բաժին,
- ընդհանուր բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

## **Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղությունները**

### **1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում**

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առաջնահերթ գործառույթներից է կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը և միջազգային առաջավոր փորձի վրա հիմնված բազմակողմանի և առավել ճկուն իրավական կարգավորումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից, հանրային ծառայությունների ոլորտում միջազգային համագործակցության անհրաժեշտությունից:

Մասնավորապես, էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կոգեներացիոն կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի գնման երաշխիքային ժամկետի ավարտով պայմանավորված՝ 2015 թվականի մայիսին հանձնաժողովի որոշմամբ սահմանվել է էլեկտրական էներգիայի առուվաճառքի (էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության (կոգեներացիոն) կայաններ-բաշխող) պայմանագրի նոր օրինակելի ձևը:

Էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության (կոգեներացիոն) էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի գնումը բաշխիչ ցանցի կողմից կանոնակարգելու նպատակով մշակվել և հաստատվել են նոր սակագնային կարգավորում սահմանող շուկայի կանոնները:

Հանձնաժողովը վերանայել է նաև 2013 թվականի որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը. հստակեցվել են կարգի՝ պետական տուրքի վճարմանն առնչվող դրույթները, սահմանվել է պատշաճ ձևով ծանուցման հասկացությունը, հստակեցվել է արտադրության լիցենզիա ունեցող անձանց կողմից կայանի վերակառուցման ընթացակարգը, հստակեցվել են երաշխիքների վճարման կարգի որոշակի դրույթներ, ինչպես նաև նախատեսվել է նորմ, որով կարգով սահմանված երաշխիքը չներկայացրած լիցենզավորված անձի համար սահմանվել է երաշխիքի գումարը պետական բյուջե փոխանցելու պարտավորություն՝ այդ գումարը ՀՀ պետական բյուջե փոխանցելու վերաբերյալ հանձնաժողովի կողմից որոշում կայացվելու դեպքում, նախատեսվել են անցումային դրույթներ՝ մինչև կարգի ուժի մեջ մտնելը արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման լիցենզիաներ ստացած անձանց

վերաբերյալ:

Փոփոխություններ և լրացումներ են կատարվել 2004 թվականին ընդունված «Էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի և ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» որոշման մեջ: Նշված պայմանագրերում փոփոխվել է տույժ հաշվարկելու դեպքում կատարված վճարումների մարման առաջնահերթությունը՝ սահմանելով, որ գնորդի (պատվիրատուի) կատարած վճարումներից վաճառողն (կատարողն) առաջնահերթ մարում է առաքված էլեկտրաէներգիայի արժեքը, հետո միայն հաշվարկված տույժը, նախատեսվել է կողմերի պարտավորությունը վճարման ենթակա էլեկտրաէներգիայի վերաբերյալ ակտի մասով առարկություն չունենալու դեպքում ստորագրել այն մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 12-ը ներառյալ, հստակեցվել է հաշվարկային կենտրոնի ներկայացրած վճարման ենթակա էլեկտրաէներգիայի վերաբերյալ ակտի առնչությամբ առկա տարածայնության լուծման կարգը, ինչպես նաև այդ տարածայնության չլուծման պարագայում կողմերի պարտավորությունները, ամրագրվել է պայմանագրի լուծման վերաբերյալ համապատասխան դրույթ, էլեկտրաէներգիայի գնի գործողության ժամկետը սահմանվել է մինչև հանձնաժողովի կողմից սահմանված նոր սակագնի ուժի մեջ մտնելը:

Մշակվել և հաստատվել է Հայաստանի Հանրապետության տարածքով էլեկտրական էներգիայի (հզորության) տարանցիկ փոխադրման կարգը:

Մշակվել և հաստատվել են էլեկտրաէներգետիկական համակարգում վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներում էլեկտրական էներգիայի ներկրման և արտահանման կարգը, ինչպես նաև այդ իրավիճակներում արտահանման նպատակով էլեկտրական էներգիայի առուվաճառքի (բաշխող-հաղորդող) պայմանագրի և ներկրման նպատակով էլեկտրական էներգիայի առուվաճառքի (հաղորդող-բաշխող) պայմանագրի օրինակելի ձևերը:

Լրամշակվել և հաստատվել է Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկան:

Հանձնաժողովը գործուն մասնակցություն է ունեցել մի շարք օրենքների, այդ թվում՝ «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի, «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» և «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի, ինչպես նաև ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքներին:

## 2. Սակագնային քաղաքականություն

Հանձնաժողովի կողմից իրականացվող սակագնային քաղաքականությունը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրեր:

Հաշվետու տարվա ընթացքում, ուսումնասիրելով էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների, էլեկտրաէներգետիկական շուկային ծառայություններ մատուցողների և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ներկայացրած սակագների վերանայման հայտերը, վերլուծելով 2015-2016թթ. հաշվարկային ժամանակահատվածի համար էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված անձանց անհրաժեշտ ծախսային հոդվածներն ու պարտավորությունները, հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի սակագնային մարժայի և մյուս ընկերությունների սակագների հաշվարկման մեթոդիկաները, 2015-2016 թվականների էլեկտրաէներգիայի սպառման ու դրա հիման վրա «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության հաշվեկշռի վերաբերյալ կանխատեսումները, 2014 թվականին էլեկտրաէներգետիկական համակարգում իրականացված ներդրումների վերլուծության արդյունքները և մի շարք այլ գործոններ, հանձնաժողովը վերանայել է արտադրող կայանների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության), «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագները, «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական շուկային էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման հաստատագրված ամսական վճարները և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագները: Արդյունքում՝ 2015 թվականի օգոստոսի 1-ից գործողության մեջ են մտել նոր սակագներ՝ ինչպես արտադրող կայաններից առաքվող էլեկտրաէներգիայի և էլեկտրաէներգետիկական համակարգին ծառայություններ մատուցող ընկերությունների, այնպես էլ վերջնական սպառողների

համար, որը մեծ հնչեղություն առաջացրեց հասարակության շրջանում, և տեղի ունեցան բողոքի ակցիաներ: Այնուհետև, հիմք ընդունելով հասարակության շրջանում վստահություն կառուցելու և հասարակության հետ բաց ու թափանցիկ հաղորդակցությունն ապահովելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահի հայտարարությունը՝ իրականացվել է խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցույթ, որի արդյունքներով հաղթող ճանաչված «Դելոյթ ընդ Տուչ» միջազգային խորհրդատվական ընկերության հետ ստորագրվել է էներգետիկայի բնագավառում կարգավորման խորհրդատվական ծառայության մատուցման պայմանագիր: Նշված պայմանագրով նախատեսված աշխատանքների շրջանակում խորհրդատուն տվել է իր եզրակացությունը՝ 2015 թվականի օգոստոսի 1-ից էլեկտրական էներգիայի սակագների վերանայման մասին հանձնաժողովի որոշումը հիմնավորված լինելու վերաբերյալ:

Միաժամանակ, հաշվի առնելով էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության (կոգեներացիոն) էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները կանոնակարգող շուկայի նոր կանոնները՝ «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՁԷԿ)» ԲԲԸ-ից և «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) առաջարկված սակագների փոփոխությունները, վերանայվել են նաև «Հայֆուսկոգեներացիա» ՓԲԸ-ի «Ինքնավար ջերմային էլեկտրակայան-1 (ԻՋԷԿ-1)» և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կոգեներացիոն կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Հաշվետու տարվա ընթացքում ներկայացված հայտերի հիման վրա սահմանվել են 11 նորակառույց փոքր հիդրոէլեկտրակայաններից, 1 նորակառույց հողմային էլեկտրակայանից և վերանայվել 4 գործող փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Ելնելով սղաճի և արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից, յուրաքանչյուր տարի, համաձայն ընդունված մեթոդիկայի, վերանայվում են վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: 2015 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ են մտել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի «Լոռի-1» հողմային էլեկտրակայանից, «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանից և 156 փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի նոր սակագները:

Հաշվետու տարվա ընթացքում «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի



նախատեսված պլանային նորոգումների ժամկետների փոփոխման հետ կապված՝ ճշգրտվել են կայանի 2015 թվականի պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները, ինչպես նաև «ՔոնթուրԳլոբալ Յիդրո Կասկադ» ՓԲԸ-ին լիցենզիայի տրամադրմամբ պայմանավորված՝ համապատասխան փոփոխություններ են կատարվել Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի 2015 թվականի պայմանագրային և տնօրինելի հզորությունների մասով: Տարվա վերջին ուսումնասիրվել և հաստատվել են էլեկտրական էներգիա արտադրող խոշոր կայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացվող 2016 թվականի պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները:

2015 թվականի փետրվար ամսին վարձակալության 10-րդ պայմանագրային տարվա համար սակագների ճշգրտման առաջարկով հանձնաժողով է դիմել «Երևան Ջուր» ՓԲԸ-ն՝ բազիսային սակագներում հաշվի առնելու մանրածախ ջրամատակարարման ծավալների, տարեկան սղաճի, ՀՀ դրամ/եվրո փոխարժեքի և ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությունները: «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հայտի համաձայն՝ ճշգրտված մանրածախ սակագինը հաշվարկվել է 172,632 դրամ/խմ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը), որը 2.376 դրամ/խմ-ով գերազանցում էր գործող սակագինը: Սակայն, հայտի ուսումնասիրության ընթացքում «Երևան Ջուր» ՓԲԸ-ն ներկայացրել է իր բաժնետիրոջ՝ «Վեոլիա» ընկերության առաջարկությունը՝ ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման գործող սակագներն անփոփոխ թողնելու վերաբերյալ՝ նպատակ ունենալով թեթևացնել բաժանորդների բեռը: Արդյունքում, հանձնաժողովի որոշմամբ վերահաստատվել են սպառողներին խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների, ինչպես նաև ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող այլ անձանց կամ համայնքներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման մեծածախ ծառայությունների, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման գործող սակագները:

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից հանրային էլեկտրոնային հաղորդակցության անրակցված ցանցով մատուցվող սակագնային փաթեթների տեսականին ընդլայնելու և բաժանորդներին ընտրության ավելի մեծ հնարավորություն ընձեռնելու, ինչպես նաև այդ ծառայությունների շուկայում մրցակցության զարգացմանը խթանելու նպատակով 2015 թվականին սահմանվել են «Այլընտրանքային բիզնես» սակագնային փաթեթը և «Երեքը մեկում» ծառայությունների փաթեթի շրջանակում տրամադրվող՝ հիմնական հեռախոսագծի բաժանորդային վճարը և ամսական անվճար րոպեների չափաքանակը:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով՝ ճշգրտվել և հաստատվել են հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2016 թվականի անվանական կազմը և, հաշվի առնելով յուրաքանչյուր կարգավորման պարտադիր վճար վճարողի իրացման շրջանառությունը՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը:

### **3. Լիցենզավորում և լիցենզավորված անձանց պայմանագրային հարաբերությունների կարգավորում**

Լիցենզավորման գործառույթն առանձնանում է նրանով, որ թույլ է տալիս մրցակցության բացակայության կամ սահմանափակ մրցակցության պայմաններում կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գործունեության միասնական չափանիշների սահմանման միջոցով հավասարակշռել սպառողների և այդ ընկերությունների օրինական շահերը, կարգավորման դաշտում գործող տարբեր ընկերությունների համար վարել միատեսակ քաղաքականություն, ինչպես նաև լիցենզավորված գործունեության մոնիթորինգի միջոցով պատասխանատվության միջոցներ կիրառել իրենց պարտականություններն ըստ պատշաճի չկատարող ընկերությունների նկատմամբ:

Հանձնաժողովը 2015 թվականի ընթացքում էներգետիկայի բնագավառում տրամադրել է էլեկտրական էներգիայի արտադրության 7 լիցենզիա, ստացել է լիցենզիայի վերաձևակերպման՝ 8, լիցենզիաների պայմաններում փոփոխություններ կատարելու 57 հայտեր: Ուժը կորցրած է ճանաչվել էներգետիկայի բնագավառի 10 լիցենզիա: Հանձնաժողովը երկարաձգել է ջրային համակարգի օգտագործման 2 թույլտվության գործողության ժամկետ:

Հանձնաժողովի կողմից իրավական փորձաքննություն են անցել և գրանցվել էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև կնքված 396 պայմանագրեր:

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տրամադրվել են հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի 8 լիցենզիա, ռադիոհաճախականությունների օգտագործման՝ 12, սիրողական ռադիոյի՝ 4 և համարների զբաղեցման 3 թույլտվություն:

### **4. Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ**

Կարգավորվող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի սահմանված ցուցանիշների պահպանման գործընթացը մշտապես գտնվում է

հանձնաժողովի ուշադրության կենտրոնում՝ ինչպես կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվության վերլուծության, այնպես և ընտրանքային կարգով տեղերում իրականացվող ուսումնասիրությունների միջոցով: Այս գործիքակազմի կիրառմամբ հանձնաժողովը մշտապես բարձրացնում է իր կողմից իրականացվող մոնիթորինգի աշխատանքների արդյունավետությունը:

Հանձնաժողովն էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերություններից եռամսյակային պարբերականությամբ տեղեկատվություն է ստանում սպառողների սպասարկման որակի փաստացի ցուցանիշների վերաբերյալ: Մասնավորապես՝ մշտական մոնիթորինգի են ենթարկվում՝

- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների՝ սպառողների մատակարարման ընդհատումների քանակի և տևողության ցուցանիշները,
- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների դիմումներին, բողոքներին և հարցադրումներին պատասխանելու ժամկետները,
- առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում էլեկտրական էներգիա և բնական գազ մատակարարող ընկերությունների կողմից կատարված վերահաշվարկները և հաշվարկված տույժերը:

Սպառողների սպասարկման որակի սահմանված ցուցանիշներից շեղումների դեպքում մատակարար ընկերությունների հետ պարբերաբար իրականացվում են առկա խնդիրների կարգավորմանն ուղղված քննարկումներ, մշակվում են միջոցառումներ՝ նման խախտումները հետագայում բացառելու նպատակով: Հարկ է նշել, որ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը՝ եռամսյակային արդյունքներով, հրապարակվում է հանձնաժողովի վեբ կայքում:

Միևնույն ժամանակ, հանձնաժողովն իր գործառույթների տիրույթում հետևողականորեն մոնիթորինգ է իրականացնում ջրամատակարարման ոլորտում գործող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի պայմանների բարելավմանն ուղղությամբ:

2015 թվականին պարբերաբար ուսումնասիրվել են «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից հրապարակված ժամանակացույցների և փաստացի ջրամատակարարման տևողության ցուցանիշները: Բացի այդ, հանձնաժողովը, տեղեկատվության հավաստիության

ուսումնասիրության նպատակով, «Լոռի-ջրնուղկոյուղի», «Շիրակ-ջրնուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների սպասարկման տարածքներում գտնվող ընդհանուր թվով 67 համայնքների ղեկավարներից հարցում է կատարել ջրամատակարարման տևողության փաստացի ցուցանիշների վերաբերյալ: Հարցումների արդյունքները ամփոփվել են, կազմվել է համապատասխան վերլուծական տեղեկանք, որը հրապարակվել է հանձնաժողովի վեբ կայքում:

Հանձնաժողովը մշտապես հետևում է նաև նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացին: 2015 թվականին իրականացրած ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ ընկերությունը որոշ դեպքերում չի ապահովել նոր սպառողների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման գործընթացը: Նշված խախտումների համար ընկերությունը 2015 թվականի ընթացքում ենթարկվել է տուգանքի՝ 60 մլն ՀՀ դրամի չափով, իսկ առկա խնդիրների կարգավորման նպատակով տրվել են համապատասխան հանձնարարականներ:

## **5. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում և գնումների մոնիթորինգ**

Հանձնաժողովի գործառույթներից իր կարևորությամբ առանձնանում է էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացը, այդ թվում՝ ընկերությունների ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ համապատասխան վերլուծական տեղեկանքների կազմումն ու հրապարակումը: Նշված աշխատանքների իրականացումը կարևոր է սակագներում ներառման ենթակա ներդրումների օգտակար և օգտագործվող ծավալի գնահատման, այդ համատեքստում անարդյունավետ և ոչ հիմնավոր ներդրումների ծավալի բացահայտման և վերհանման առումով՝ սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագներում դրանք չներառելու սկզբունքից ելնելով: Այդ նպատակով հանձնաժողովը յուրաքանչյուր տարի քննարկում և համաձայնություն է տալիս էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների հաջորդ տարիների ներդրումային ծրագրերին, ինչպես նաև ամփոփում ընկերությունների նախորդ տարվա ներդրումային գործունեության արդյունքները և հրապարակում համապատասխան վերլուծական տեղեկանքներ:

2015 թվականի ընթացքում էներգետիկայի բնագավառում հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրեր են իրականացրել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ

կորպորացիա» և «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունները, ինչպես նաև «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Հրազդան-5» հիմնարկը:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը միտված է Սևան-Հրազդանյան ՀԷԿ-երի կասկադի արդիականացմանը, հիդրոկառույցների վերականգնմանը և հետագա շահագործման համար ոչ պիտանի սարքավորումների փոխարինմանը, իսկ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների ներդրումային ծրագրերը՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը, նոր սպառողների սպառման համակարգերի ցանցին միացմանը, առևտրային հաշվառման համակարգերի կատարելագործմանը, հետագա շահագործման համար ոչ պիտանի սարքավորումների փոխարինմանը, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրմանը, ինչպես նաև ընկերությունների բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ այլ ներդրումների իրականացմանը: «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Հրազդան-5» հիմնարկի ներդրումային ծրագիրը միտված է կայանի հուսալիության և անվտանգության մակարդակի բարձրացմանն ու արդիականացմանը, ինչպես նաև բնականոն և հուսալի շահագործման ապահովմանը: «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրն ուղղված է համակարգչային տեխնիկայի, լրասարքերի և ծրագրային փաթեթների ձեռքբերմանը և ընկերությունների գործունեության ապահովման համար անհրաժեշտ այլ ներդրումների իրականացմանը: Հանձնաժողովն առանձնակի ուշադրություն է դարձնում էլեկտրական էներգիայի մատակարարման և բնական գազի բաշխման գործունեություն իրականացնող ընկերությունների ներդրումային ծրագրերի կառուցվածքին՝ առաջնահերթություն տալով սպասարկման որակի ցուցանիշների առավել ցածր մակարդակ ունեցող հատվածներում ներդրումների իրականացմանը:

2015 թվականի ընթացքում շարունակվել է էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացը: Վերլուծության են ենթարկվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի, «Գազպրոմ Արմենիա» և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ների 2014 թվականի ներդրումային գործունեության արդյունքները: Քննարկվել են «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ների և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Հրազդան-5» հիմնարկի կողմից համաձայնեցման ներկայացված 2015 թվականի ներդրումային ծրագրերը և ընդունվել են համապատասխան որոշումներ:

Հանձնաժողովը մշտապես հետևում է նաև իր կարգավորման դաշտում գործող «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «ԱրմենՏել» ՓԲԸ-ների, «Տրանսգազ» ՍՊԸ-ի և «ՀրազՁԷԿ» ԲԲԸ-ի կողմից իրականացվող գնումների արդյունավետությանն ու թափանցիկությանը: Վերջիններիս կողմից գնումների գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով, իրականացվող գնումների մասին ողջ տեղեկատվությունը ներկայումս հրապարակվում է ինչպես ՀՀ ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկագրում, այնպես և ընկերությունների վեբ կայքերում:

2015 թվականի ընթացքում հանձնաժողովը, համաձայն կարգավորվող անձանց գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգի, հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող անձանց կարիքներին համապատասխան ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների քանակի և ժամանակացույցի գնահատման նպատակով իրականացրել է նշված անձանց կողմից հրապարակվող գնումների պլանների մոնիթորինգ, որի արդյունքները հրապարակվել են հանձնաժողովի վեբ-կայքում: Նույն ժամանակահատվածում իրականացվել է նաև կարգավորվող անձանց գնումների առանձին գործարքների մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրությունների, գործարքների համար կիրառվող գնման մեթոդների ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարների ընտրության ընթացակարգերի մոնիթորինգը:

## **6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն**

Կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար, ինչպես նաև հնարավորություն են տալիս ձևավորել կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների համապատասխան վիճակագրական բազա:

Այդ առումով կարևորվում է ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլաններում կարգավորմանը վերաբերող հաշիվների և ենթահաշիվների համակարգի ներդրումը, ինչը հնարավորություն է ընձեռում հստակ տարանջատել հիմնական (կարգավորվող) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և

վերլուծություն: Այս համակարգն արդեն ներդրվել է էլեկտրաէներգետիկայի, գազամատակարարման բնագավառների և խմելու ջուր մատակարարող ընկերություններում, լրամշակվել են նաև ֆինանսական հաշվետվությունների ձևերը, որոնց արդյունքում կրճատվել են ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալները և ներկայացման պարբերականությունը:

Կարգավորվող ընկերություններում հաշվապահական հաշվառման հաշիվների և ենթահաշիվների համակարգը կատարելագործելու նպատակով, հանձնաժողովը նախաձեռնել էր ընկերությունների համար անհատական հաշվային պլանների մշակման և ներդրման աշխատանքները, ինչը հնարավորություն կտա ընկերություններից ստանալ առավել մանրամասն և հասցեական տեղեկատվություն, արագ և դինամիկ կերպով արձագանքել ընկերությունների կազմակերպատիրական կառուցվածքների, նրանց գործառույթների շրջանակի, ինչպես նաև տնտեսական դաշտում օրենսդրական փոփոխություններին և համարժեք փոփոխություններ կատարել հաշվապահական հաշվառման հաշվային պլաններում:

Գազամատակարարման համակարգի ընկերությունների համար արդեն մշակվել և հաստատվել են հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլաններ, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների լրամշակված անհատական ձևեր:

2015 թվականին հանձնաժողովն էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների համար ևս հաստատել է հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլաններ, որոնց հիման վրա ընկերությունների համար հետագայում կմշակվեն հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների անհատական ձևեր:

Էներգետիկայի բնագավառի և ջրային համակարգի կարգավորվող ընկերությունները, «ԱրմենՏել», «Հայփոստ», «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ները հանձնաժողովի սահմանած ձևերով և պարբերականությամբ ներկայացրել են ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել է վերջիններիս ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերլուծություն:

Սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սպառողներից գումարների հավաքագրման և էլեկտրաէներգետիկական համակարգում արտադրող կայաններին և ծառայություններ մատուցող ընկերություններին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետներում վճարումների կատարման գործընթացը վերահսկելու նպատակով հանձնաժողովն ամսական արդյունքներով ստացել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հատուկ հաշիվներում դրամական միջոցների շարժի վերաբերյալ տեղեկատվություն, որի վերլուծության արդյունքում հայտնաբերված խախտումների համար ընկերության

նկատմամբ հարուցվել են վարչական վարույթներ և կիրառվել դրամական տուգանքներ:

Վերը նշված գործընթացի բարելավման և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ֆինանսական առողջացման նպատակով 2015 թվականին լրամշակել են հանձնաժողովի 2004 թվականի սեպտեմբերի 16-ի N111Ն որոշմամբ հաստատված՝ հատուկ հաշվից (հաշիվներից) վճարումներ կատարելու և երաշխիքային գումարն օգտագործելու կարգը և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման N0092 լիցենզիայի պայմանները, ինչի արդյունքում, սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սպառողներից հավաքագրված գումարների 15 տոկոսը մինչև 2018 թվականի հունվարի 1-ն ազատվում է պարտադիր գրավադրման պահանջից, որը թույլ է տալիս ընկերությանն այդ գումարի չափով չներգրավել լրացուցիչ վարկային միջոցներ, և այդ գումարներն ուղղել առկա պարտավորությունների կատարմանը:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովը կշարունակի իր վեբ կայքում ([www.psrc.am](http://www.psrc.am)) հրապարակել կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

## **7. Հանձնաժողովի հիմնական գործունեության ընթացիկ ուղղություններ**

Հանձնաժողովի՝ օրենսդրությամբ սահմանված պարտականությունների կատարմանն են ուղղված նրա հիմնական գործունեության ընթացիկ ուղղությունները:

Հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակում որոշումներն ընդունում է նիստերի միջոցով, որոնք դմբաց են և, որպես կանոն, անցկացվում են ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ: Հանձնաժողովը նախապես հայտարարում է նիստերի անցկացման տեղի և ժամի մասին, հնարավորություն ընձեռում շահագրգիռ անձանց և հանրության ներկայացուցիչներին մասնակցել նիստերին, ստանալ օրակարգն ու քննարկվող նյութերը, ներկայացնել տեղեկություններ և հանդես գալ ելույթներով: 2015 թվականին հրավիրվել է հանձնաժողովի 84 նիստ և ընդունվել 463 որոշում:

Էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների դիմումների (բողոք, հարցադրում) քննարկումը՝ հանձնաժողովի կողմից սահմանված սպառողների սպասարկման որակի պահանջների մաս է և մշտապես վերահսկվում է հանձնաժողովի կողմից: 2015 թվականին էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների համար հանձնաժողովի որոշումներով սահմանվել են սպառողների



դիմումների վերաբերյալ եռամսյակային տեղեկատվության ներկայացման նոր կարգեր: Ներկայացված տեղեկատվությունների վերլուծության արդյունքներն ամփոփելուց հետո, հանրությանն իրազեկելու նպատակով, ընկերությունների ներկայացրած տեղեկատվությունները հրապարակվում են հանձնաժողովի պաշտոնական կայքի համապատասխան բաժնում:

Կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից հանձնաժողով են ներկայացվում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում ծառայությունների մատուցմանն առնչվող գրավոր՝ այդ թվում նաև էլեկտրոնային եղանակով, և բանավոր՝ հանձնաժողովի «Թեժ գծի» հեռախոսահամարով կամ այցելելով հանձնաժողով, դիմումներ (բողոք, հարցադրում, տեղեկատվություն ստանալու հարցում, առաջարկություն)՝ պարզաբանումներ ստանալու կամ հանրային ծառայություններ մատուցող ընկերությունների հետ առաջացած վեճերի լուծման վերաբերյալ: 2015 թվականին հանձնաժողովը ստացել է 715 դիմում, որոնցից 247-ը՝ գրավոր, 468-ը՝ բանավոր: Դիմումները քննարկվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, տրվել են համապատասխան լուծումներ և պարզաբանումներ: Հանձնաժողովում գործող «Թեժ գծի» հեռախոսահամարով կազմակերպությունները և անհատները խորհրդատվություն են ստացել մատակարար-սպառող հարաբերություններում իրենց իրավունքների և պարտականությունների, դրանց խախտման դեպքում անհրաժեշտ քայլերի և գործողությունների վերաբերյալ: Սպառողը հնարավորություն ունի նաև անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ հանձնաժողովի [www.psrc.am](http://www.psrc.am) պաշտոնական կայքի «Տեղեկատվություն սպառողին» և «Հարց ու պատասխան» բաժիններից: Միաժամանակ 2015 թվականին ներդրվել և մայիս ամսից հանձնաժողովի պաշտոնական [www.psrc.am](http://www.psrc.am) կայքում գործում է «Հետևել դիմումի ընթացքին» բաժինը, որը դիմումատուին հնարավորություն է տալիս առցանց հետևելու իր դիմումի քննարկման ընթացքին: 2015 թվականին հանձնաժողով ներկայացված դիմումների քննարկման ընթացքի վերաբերյալ տարեկան հաշվետվությունը 2016 թվականի մարտի 1-ի դրությամբ հրապարակվել է հանձնաժողովի պաշտոնական [www.psrc.am](http://www.psrc.am) կայքում:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների կայունության զարգացման աջակցություն» ծրագրի շրջանակում, սպառողների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով, պատրաստվել է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման վերաբերյալ հանձնաժողով ներկայացված դիմումների և դրանց քննարկման գործընթացի մասին տարեկան տեղեկատվություն, որը մինչև 2016 թվականի մայիսի 31-ը կհրապարակվի հանձնաժողովի պաշտոնական [www.psrc.am](http://www.psrc.am)

կայքում:

Միևնույն ժամանակ, հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում է զանգվածային լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքը, որը միտված է հանձնաժողովի ընթացիկ գործունեությունը պատշաճ լուսաբանելու և հանրությանն առավել ընկալելի ներկայացնելու խնդիրներին: Հանձնաժողովի անդամները և աշխատակազմի մասնագետները հանրային հնչեղություն ունեցող խնդիրների շուրջ պարբերաբար հանդես են գալիս ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով:

Հանձնաժողովը մշտապես համագործակցում է սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ, որոնց ներկայացուցիչները պարբերաբար մասնակցում են հանրային շահի տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկմանը, ներկայացնում իրենց դիրքորոշումը, դիտողություններն ու առաջարկությունները: Նրանք մասնակցում են նաև հանձնաժողովի նիստերին և հարցերի ու ելույթների միջոցով ներկայացնում սեփական տեսակետը քննարկվող որոշումների առնչությամբ: Մշտական բնույթ է կրում համագործակցությունը նաև ՀՀ հանրային խորհրդի և մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ՝ սպառողների իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրների առնչությամբ:

Հանձնաժողովի կարգավորման դաշտում գործող ընկերություններն ապահովում են ՀՀ պետական բյուջեի զգալի մուտքեր՝ լիցենզիաների (թույլտվությունների) տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, ինչպես նաև նոր արտադրական հզորությունները լիցենզիաների գործողության ժամկետում չգործարկելու կամ լիցենզիայի պայմանները ոչ պատշաճ կատարելու համար զանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների հաշվին: 2015 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել շուրջ 6.5 մլրդ դրամ, որի հիմնական մասը՝ շուրջ 5.4 մլրդ դրամը, կազմել են ռադիոհաճախականությունների օգտագործման և թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը:

## **Հանձնաժողովի գործունեության ոլորտային ուղղությունները**

### **1. Էներգետիկայի բնագավառ**

#### **1.1 Մեծածախ շուկայի մասնակիցների հարաբերությունները կարգավորող գործիքների կատարելագործում**

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի և հանձնաժողովի 2002

թվականի համապատասխան որոշմամբ հաստատված էլեկտրամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջող իրավիճակներում էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց կողմից իրականացվելիք գործողությունների ծրագրերի մշակման կարգի համաձայն՝ 2015 թվականին հանձնաժողովի կողմից վերանայվել և ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության հետ համատեղ հաստատվել է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ների համատեղ մշակած էլեկտրամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջող իրավիճակներում կիրառվող գործողությունների ծրագիր:

Նպատակ ունենալով օպտիմալացնելու էլեկտրաէներգիայի հաշվառման միջոցների տեղակայման և շահագործման ընթացակարգերը, ինչպես նաև հստակեցնելու «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի և էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցների հարաբերությունները վերը նշված գործընթացում, լրամշակվել է հանձնաժողովի 2006 թվականին ընդունված համապատասխան որոշումը:

Էլեկտրաէներգիայի բաշխման ցանցերում տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկի գործընթացի թափանցիկության և արդյունավետության բարձրացման նպատակով հանձնաժողովը համապատասխան փոփոխություն կատարելով «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի լիցենզիայի պայմաններում, ամրագրել է վերջինիս կողմից բաշխման ցանցի տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկման պարտականությունը: Արդյունքում, հաղորդման և բաշխման ցանցերում էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկման ողջ գործընթացը համակարգվում է մեկ ընկերության՝ հաշվարկային կենտրոնի կողմից: Հաղորդման և բաշխման ցանցերում էլեկտրաէներգիայի անխուսափելի տեխնոլոգիական կորուստների մեծությունների հաշվարկման և «հաղորդող-հաշվարկային կենտրոն», «բաշխող-հաշվարկային կենտրոն» կողմերի փոխհարաբերությունները հստակեցնելու նպատակով ընդունվել է հաղորդման և բաշխման ցանցերում էլեկտրական էներգիայի անխուսափելի տեխնոլոգիական կորուստների մեծությունների հաշվարկման կարգը:

## **1.2 Մատակարարների և սպառողների հարաբերությունները կարգավորող գործիքների կատարելագործում**

2015 թվականին շարունակվել է էլեկտրական էներգիայի ու բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում փոփոխություններ կատարելու գործընթացը:

Այս համատեքստում հանձնաժողովը փոփոխություն է կատարել բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում, որով հնարավորություն է ընձեռնվում բաժանորդներին՝ անվճար, էլեկտրոնային եղանակով ծանոթանալու մատակարարված բնական գազի քանակի և արժեքի մասին տեղեկատվությանը «Գազարոմ Արմենիա» ՓԲԸ-ի վեբ-կայքի միջոցով (առցանց)՝ առնվազն մեկ տարի ժամանակահատվածի համար: Նշված փոփոխությունն ուժի մեջ կմտնի 2016 թվականի հունիսի 1-ից՝ նկատի ունենալով ընկերության բնական գազի իրացման նոր առցանց ծրագրի ներդրման աշխատանքների ավարտի ժամկետները: Բացի այդ, նշված կանոններում կատարված լրացումներն իրավունք են տալիս բնական գազ սպառողներին, որպես այլընտրանքային միջոց, իրենց գազասպառման համակարգին ամրակցված առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգումը սեփական միջոցների հաշվին պատվիրել հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման իրավունք ունեցող ցանկացած այլ կազմակերպությունների: Նման դեպքում մատակարարը իրավունք կունենա ներկա գտնվելու առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ստուգման փորձաքննության և ստուգաչափման աշխատանքներին: Առևտրային հաշվառքի սարքի փորձաքննության արդյունքների մասին իրավասու կազմակերպության եզրակացությունը պետք է հաստատված լինի չափագիտական մարմնի կողմից: Այն դեպքում, երբ ներկայացված փորձաքննական եզրակացությամբ փաստվի առևտրային հաշվառքի սարքի խախտում, մատակարարը պարտավոր կլինի իրականացնել բաժանորդի կողմից սպառված բնական գազի քանակի և արժեքի վերահաշվարկ:

2015 թվականի ընթացքում լրամշակվել են էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները, որի արդյունքում՝ այն դեպքերում, երբ սպառողի սեփականությունը հանդիսացող էլեկտրատեղակայանքին միացված կլինեն ենթասպառողներ, ապա սպառողը կվճարի միայն իր բեռին համապատասխանող էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական կորուստի արժեքի համար: Բացի այդ, նախատեսվում է սպասարկման որակի խախտման դեպքերում ավելացնել մատակարարի կողմից սպառողին վճարվող տույժի չափը՝ սահմանելով այն սպառված էլեկտրաէներգիայի միջին ամսական արժեքի 50 տոկոսի (ներկայիս 20 տոկոսի) չափով, բայց ոչ ավելի, քան 2500 դրամը (ներկայիս 2000 դրամի փոխարեն): Այս փոփոխությունը ուժի մեջ կմտնի 2017 թվականի հունվարի 1-ից, որպեսզի մատակարարը որոշակի ժամանակ ունենա բարձրացնելու բաշխիչ ցանցերի հուսալիությունը առավել վատթար հատվածներում, քանի որ ներդրված պատասխանատվության համակարգը հենց այս նպատակն է հետապնդում: Միաժամանակ, էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների համապատասխան փոփոխությամբ կրճատվել են նոր սպառողի կամ

սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին 6(10) կՎ լարմամբ միացման նպատակով դիմումն ստանալու օրվանից մինչև միացման պայմանագրի կնքման առաջարկ ներկայացնելու և պայմանագրի կնքման օրվանից մինչև դիմող անձին մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու առավելագույն ժամկետները:

2016 թվականի հունվարի 1-ից նախատեսվում է ներդնել էլեկտրաէներգիայի ծախսի հաշվառման փոխադարձ հսկողության նոր գործիք՝ հնարավորություն ընձեռելով 6/10 կՎ և բարձր լարման սպառողների համար իրական ժամանակի ռեժիմում վերահսկելու իրենց կողմից սպառված էլեկտրաէներգիայի ծախսը էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգի միջոցով: Տվյալ կետի ուժի մեջ մտնելու ժամկետը առաջարկվում է սահմանել 2016 թվականի հուլիսի 1-ը՝ հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի էլեկտրական էներգիայի ավտոմատացված հաշվառման և հսկման համակարգի նոր ծրագրային ապահովման ներդրմանն առնչվող աշխատանքների ավարտը: Սահմանվել է նաև էլեկտրամատակարարման պայմանագրերի վերակնքման և փոփոխման ընթացակարգը, հստակեցվել է բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների էլեկտրամատակարարման պայմանագրերի կնքման համար սպառողների կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Բացի վերը նշվածից սպառողին իրավունք է վերապահվել իր էլեկտրասպառման համակարգին անրակցված առևտրային հաշվառքի սարքերի ճշտության ստուգումը պատվիրելու նման իրավունք ունեցող այլ կազմակերպությունների: Նշված կետով սահմանվել է վերոհիշյալ գործընթացի ողջ ընթացակարգը: Մինևույն ժամանակ, սպառողի կողմից չբացառվող չարաշահումները կանխելու նպատակով սահմանվել է դրույթ, որի համաձայն սպառողի կողմից առևտրային հաշվառքի սարքի չվերադարձման դեպքերում մատակարարը իրավունք կունենա սպառողից պահանջել վճարելու տույժ՝ վերջին մեկ տարվա ընթացքում առավելագույն ծախս ունեցող ամսվա էլեկտրաէներգիայի արժեքի կրկնապատիկի չափով:

### **1.3 Վերականգնվող էներգետիկայի բնագավառ**

Վերականգնվող էներգետիկայի բնագավառի զարգացման միտումները ևս մշտապես գտնվում են հանձնաժողովի ուշադրության կենտրոնում: Հայաստանի Հանրապետությունում վերականգնվող էներգետիկայի ճյուղերից ամենազարգացածը թերևս փոքր հիդրոէներգետիկան է:

2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանրապետությունում գործում են 175 փոքր հիդրոէլեկտրակայաններ, ևս 37-ը գտնվում է կառուցման փուլում: Գործող

փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 313 ՄՎտ, և դրանք միջին տարեկան հաշվով կարող են արտադրել շուրջ 834 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է 87 ՄՎտ, և սպասվում է, որ գործարկումից հետո դրանք միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 310 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Այսպիսով, կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գործարկումից հետո հանրապետությունում կգործեն 212 փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք կունենան գումարային 400 ՄՎտ հզորություն և միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 1,14 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիա:

Բարենպաստ պայմաններ ստեղծելով փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման համար, հանձնաժողովը միաժամանակ հետևում է դրանց կառուցման ընթացքին՝ համապատասխան պատժամիջոցներ կիրառելով իրենց պարտավորությունները պատշաճ կարգով չկատարող ընկերությունների նկատմամբ: 2015 թվականին՝ մինչև դեկտեմբերի 31-ը, լիցենզիայի պայմանները ոչ պատշաճ կատարելու և լիցենզիայի պայմաններով սահմանված ժամկետներում փոքր հիդրոէլեկտրակայանները չգործարկելու համար հանձնաժողովը կայացրել է ընկերություններին ֆինանսական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 39 որոշում:

## **2. Ջրային ուղորտ**

Շարունակական բնույթ են կրում խմելու ջուր մատակարարող ընկերություններին ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Յուրաքանչյուր տարի «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ները հանձնաժողովի հաստատման են ներկայացնում սպառողների ջրամատակարարման տևողության նվազագույն և ծրագրային ցուցանիշները: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս առաջնահերթ բարելավել քիչ տևողությամբ ջրամատակարարում ունեցող սպառողների ջրամատակարարումը:

Հարկ է նշել, որ պետական-մասնավոր գործընկերության հետագա զարգացմանն ուղղված՝ ՀՀ-ում խմելու ջրի ուղորտում իրականացվող 2-րդ սերնդի բարեփոխումների շրջանակում ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշմամբ 2017 թվականի հունվարի 1-ից ՀՀ-ում խմելու ջրի ուղորտում ծառայությունները կմատուցվեն համապատասխան մրցույթի արդյունքում հաղթող մեկ ընկերության կողմից, որը ծառայությունները կմատուցի վարձակալության պայմանագրի ստորագրման պահին «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և

«Լոռի-ջրնուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից սպասարկվող տարածքներում: Այս համատեքստում հանձնաժողովը գործուն մասնակցություն է ունեցել վարձակալության մրցութային փաթեթի ձևավորման գործընթացում, այդ թվում՝ անցումային խորհրդատուի հետ համատեղ մշակել է ապագա վարձակալ ընկերության լիցենզիայի պայմանները և որոշմամբ հաստատել:

Ջրային համակարգում կարգավորման գործիքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ ջրային օրենսգրքում կատարված փոփոխությունները միտված են այս ոլորտում հանձնաժողովի իրավասությունների ընդլայնմանը: Այս համատեքստում նախատեսվում է վերանայել և կատարվող փոփոխություններին ներդաշնակեցնել հանձնաժողովի համապատասխան իրավական ակտերը: Գործընթացը ենթադրում է նաև նոր իրավական ակտերի ընդունում: Մասնավորապես, հանձնաժողովին են վերապահվել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) կանոնների, ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի օրինակելի ձևերի սահմանման իրավասությունները, ինչպես նաև խմելու ջուր մատակարարող ընկերությունների նկատմամբ պատասխանատվության սահմանումը՝ դրանց դեպքերի, չափերի և գործիքների ամրագրումը, միաժամանակ հանձնաժողովին օժտելով կարգավորմանն առնչվող իրավական ակտերի խախտման դեպքում մատակարարների նկատմամբ տույժեր կիրառելու իրավասությամբ: Հարկ է նշել, որ այսուհետ ոլորտում ջրամատակարարման ծառայություններ մատուցող ընկերություններին ջրային համակարգի օգտագործման թույլտվության փոխարեն տրամադրվելու է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա:

### **3. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ**

Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները՝ 2015 թվականին աշխատանքներ են տարվել էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի դինամիկ և համաչափ զարգացման, արդար և բաց մրցակցության երաշխավորման, էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության ապահովման, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ, որոնցից հատկապես կարևորվում են հետևյալ աշխատանքները.

- Հանրային շարժական բջջային կապի ծածկույթ չունեցող բնակավայրերն առնվազն մեկ օպերատորի կողմից նման ծածկույթով ապահովվելու նպատակով հանձնաժողովը պարտավորեցրել է «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություններին զարգացնել և

արդիականացնել իրենց հանրային շարժական բջջային կապի ցանցերը: Կատարված աշխատանքների արդյունքում՝ 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ բոլոր քաղաքային և գյուղական համայնքներն ապահովված են առնվազն մեկ օպերատորի հանրային շարժական կապի ծածկույթով: Ընդ որում, համայնքների 4,2 տոկոսն ապահովված է 1 օպերատորի, 18,1 տոկոսը՝ 2 օպերատորների և 77.7 տոկոսը՝ 3 օպերատորների հանրային շարժական կապի ծածկույթով: Հանրային շարժական կապի ծածկույթի ընդլայնման և տեխնոլոգիական զարգացման աշխատանքները կկրեն շարունակական բնույթ:

- Ընդունվել է այլ կարգավորվող անձանց հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերով էլքային ձայնային ծառայությունների մատուցման կարգը, որով հնարավորություն է ընձեռվել ծանուցում ներկայացրած ձայնային ծառայություններ մատուցողներին հանձնաժողովի կողմից տրամադրված համարները գործարկել ինչպես «ԱրմենՏել» ՓԲԸ-ի, այնպես էլ հանրային ամրակցված հեռախոսային ծառայություններ մատուցող այլ օպերատորների ցանցերում:
- «ԱրմենՏել» ՓԲԸ-ին տրամադրված լիցենզիայով ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ՝ ՀՀ նարգերում CDMA անլար տեխնոլոգիայի հիման վրա գործող հեռախոսագծերի արդիականացման գործընթացի շրջանակում հանձնաժողովի կողմից ընդունված որոշումներով սահմանվել է, որ ընկերությունը պարտավոր է մինչև 2016 թվականի սեպտեմբերի 1-ը լիցենզիոն պարտավորությամբ սահմանված՝ հեռախոսագծերի արդիականացման ենթակա թվով 376 բնակավայրում, իսկ մինչև 2017 թվականի սեպտեմբերի 1-ը՝ 440 բնակավայրում, անլար տեխնոլոգիայի կիրառմամբ արդիականացնել CDMA անլար տեխնոլոգիայի հիման վրա գործող հանրային ամրակցված հեռախոսային ցանցի հեռախոսագծերը, ինչը հնարավորություն կընձեռի այդ հեռախոսագծերով ստանալ ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ:
- Բացի այդ, հանձնաժողովի 2015 թվականի հուլիսին ընդունված որոշմամբ սահմանվել է, որ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն պետք է 3 տարվա ընթացքում հանրապետության 39 նարգային բնակավայրերում ապահովի լայնաշերտ ինտերնետ հասանելիություն՝ օպտիկամանրաթելային կապուղիների միջոցով: Մասնավորապես, 2016 թվականի ընթացքում նշված բնակավայրերից նախատեսվում է օպտիկամանրաթելային կապուղիների միջոցով լայնաշերտ ինտերնետ հասանելիություն ապահովել 10 նարգային բնակավայրերում:
- Ընդունվել է սիրողական ռադիոօպերատորների թույլտվությունների դասակարգման և տրամադրման, սիրողական ռադիոկայանների գրանցման, տեղադրման և օգտագործման կանոններն ու որակավորման չափանիշներին



սիրողական ռադիոօպերատորների համապատասխանությունն ստուգելու կարգը, որը պարզեցրել է թույլտվությունների տրամադրման ընթացակարգը: Բացի այդ, նախատեսվում է, որ ռադիոսիրողների կողմից թույլտվություն ստանալու հայտերը կարող են ներկայացվել նաև Հայաստանի Հանրապետության ռադիոսպորտի ֆեդերացիայի միջոցով: Սահմանվել է, որ օտարերկյա ռադիոսիրողները թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը հանձնաժողով են ներկայացնում սիրողական ռադիոկայանի աշխատանքի սկզբի ենթադրվող ժամկետից առնվազն մեկ ամիս (նախկին 2-ի փոխարեն) առաջ:


- Արդիականացվել է օպերատորների կողմից ներկայացվող տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների վերաբերյալ կանոնավոր հաշվետվության ձևը:
- Հանձնաժողովի որոշմամբ սահմանվել են հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների կողմից մատուցվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հաշվառման որոշ սկզբունքներ: Մասնավորապես, սահմանվել են օպերատորների կողմից առաջարկվող «սակագնային պլան» և «ծառայությունների փաթեթ» հասկացությունները: Բացի այդ, սահմանվել է, որ սակագնային պլանի մեջ ներառված փաթեթների սահմաններում մատուցված ծառայությունների ընդհանուր խմբաքանակի դիմաց օպերատորը գանձում է այդ սակագնային պլանի համար սահմանված սակագինը (բաժանորդավճարը), իսկ յուրաքանչյուր փաթեթի ակտիվացման պահից դրանով սահմանված ժամկետների և ծավալների սահմաններում մատուցված ծառայությունների ընդհանուր խմբաքանակի համար օպերատորը գանձում է այդ փաթեթի համար սահմանված սակագինը: Միաժամանակ, օպերատորները հաշիվների վարման (բիլինգ) համակարգում հաշվառում են փաթեթները (այդ թվում՝ սակագնային պլանների մեջ ներառված)՝ ըստ դրանց համար սահմանված սակագների (բաժանորդավճարի), իսկ փաթեթներից դուրս մատուցված ծառայությունները՝ ըստ ծավալի և համապատասխան սակագնի:

Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև մրցակցության զարգացմանը նպաստելու և տեխնոլոգիական չեզոքություն պահպանելու սկզբունքների վրա հիմնված կարգավորման քաղաքականության իրականացման արդյունքում 2015 թվականին՝


- Երևան քաղաքում ամրակցված հեռախոսացանցի թվայնացման մակարդակը կազմել է 100 տոկոս, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ 88.7 տոկոս:
- ՀՀ քաղաքային և գյուղական համայնքների 99,9 տոկոսն ապահովված է հանրային շարժական բջջային կապի 3G տեխնոլոգիայի ծածկույթով: 2015

թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ շարժական բջջային կապի բաժանորդների քանակը կազմել է 3442237:

- զարգացում է ունեցել 4G/LTE տեխնոլոգիայի վրա հիմնված շարժական կապի ցանցը, որը հասանելի է Երևան, Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Ծաղկաձոր, Էջմիածին, Արմավիր և Ջերմուկ քաղաքներում: 2016 թվականի ընթացքում նախատեսվում է 4G/LTE ցանցի ենթակառուցվածքների էական ընդլայնումը նաև այլ բնակավայրերում, որի արդյունքում Հայաստանի Հանրապետության միջապետական մայրուղիների, ինչպես նաև բնակավայրերի առնվազն 80 տոկոսն ապահովված կլինի լայնաշերտ ինտերնետային ծածկույթով:
- Երևան քաղաքում և Աշտարակ, Արտաշատ, Մասիս, Արմավիր, Մեծամոր, Մարտունի, Սևան, Վանաձոր, Չարենցավան, Հրազդան, Գյումրի, Կապան, Քաջարան, Իջևան, Դիլիջան, Աբովյան, Ալավերդի, Արարատ, Բյուրեղավան, Ծաղկաձոր, Նոր Հաճըն, Եղվարդ, Վեդի, Ջերմուկ, Եղեգնաձոր, Վայք, Ագարակ, Սիսիան, Գորիս, Մեղրի, Ապարան, Թալին, Ամասիա, Աշոցք, Ախուրյան, Մարալիկ, Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր, Բագրատաշեն, Նոյեմբերյան, Բերդ, Վաղարշապատ, Գավառ, Ճամբարակ և Վարդենիս բնակավայրերում հասանելի են դարձել FTTx տեխնոլոգիայի վրա հիմնված օպտիկամանրաթելային ցանցերը: Նախատեսվում է, որ այս տեխնոլոգիայի վրա հիմնված ցանցերը լայնածավալ տարածում կունենան նաև հանրապետության այլ բնակավայրերում:
- տարեվերջի դրությամբ միջազգային «ԱՅՓԻ» տարանցման հոսքերի թողունակությունը հանրապետությունում կազմել է 161524 Մբիթ/վ, որը 2014 թվականի համեմատությամբ աճել է մոտ երկու անգամ:
- ստորև բերված է միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության հոսքերի թողունակության 2008-2015 թվականների աճի դինամիկան:




- մրցակցության արդյունքում միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության հոսքերի աճի շնորհիվ նվազել է նաև այդ ծառայության սակագինը: 2015 տարեվերջին այն կազմել է 4066 դրամ՝ 2014 թվականի համեմատությամբ նվազելով շուրջ 22%-ով.
- ստորև բերված է միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության սակագնի 2008-2015 թվականների նվազման դինամիկան.



- լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մանրածախ շուկայում (առանց՝ շարժական 3G) գերակշռել են լարային xDSL տեխնոլոգիայով օգտվող բաժանորդները, որոնց տեսակարար կշիռը 2015 թվականին կազմել է շուրջ 49 տոկոս՝ 2014 թվականի համեմատ նվազելով շուրջ 9 տոկոսով, միևնույն ժամանակ արձանագրվել է օպտիկամանրաթելային FTTx տեխնոլոգիայով ինտերնետ հասանելիությամբ բաժանորդների թվաքանակի 25.5 տոկոս աճ.
- մանրածախ շուկայում լայն տարածում են ստացել առավել արագագործ տեխնոլոգիաների (օրինակ՝ FTTH) վրա հիմնված ինտերնետ հասանելիության սակագնային փաթեթներ, որոնք սպառողներին առաջարկվում են ինչպես ինքնուրույն ծառայության, այնպես էլ «Երեքը մեկում (Triple Play)» ձևաչափով՝ ներառելով նաև «ԱՅՓԻ» հեռուստատեսություն և հեռախոսակապ: Մասնավորապես, շուկայում «Երեքը մեկում» ծառայությունների փաթեթով «ԱՅՓԻ» հեռուստատեսության և հեռախոսակապի հետ միասին առաջարկվում է նվազագույնը ինտերնետ հոսքի 20Մբ/վ արագություն՝ 10000 դրամ արժեքով: Պետք է արձանագրել, որ շուկայում նշված տեսակի ծառայության տարածմանը

զուգընթաց նվազում են նաև առաջարկվող սակագները.

- ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդների քանակը (այդ թվում՝ շարժական 3G և 2G) 2015 թվականին կազմել է 2199771, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է շուրջ 5.5 տոկոսով.
- ավելացել են լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ծավալները, որոնց բաժանորդների քանակը (ներառյալ՝ շարժական 3G) 2015 թվականին կազմել է 1520756: Ստորև բերված է լայնաշերտ ինտերնետից օգտվող բաժանորդների քանակի 2008-2015 թվականների աճի դինամիկան:



### **Հանձնաժողովի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ**

Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում միջազգային լավագույն փորձն ուսումնասիրելու և Հայաստանի Հանրապետությունում դրա կիրառման հնարավորությունները դիտարկելու նպատակով հանձնաժողովը մշտապես համագործակցում է տարբեր միջազգային կառույցների հետ: Մասնավորապես, մշտական համատեղ աշխատանքներ են տարվում Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ, Ասիական զարգացման բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, ԱՄՆ կարգավորող հանձնաժողովների ասոցիացիայի, Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ընկերակցության, Հեռահաղորդակցության միջազգային միության, կապի տարածաշրջանային համագործակցության և Եվրոպական Միության հովանու ներքո գործող «Ինոգեյթ» ծրագրի հետ:

Հանձնաժողովը մասնակցել է Եվրոպական Միության Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակում ստեղծված հեռահաղորդակցության ոլորտը կարգավորող մարմինների խմբի աշխատանքներին:

2015 թվականին հանձնաժողովի աշխատակիցները մասնակցություն են ունեցել Եվրոպական Միության Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակում կազմակերպված լիազումար նիստերին և աշխատանքային սեմինարներին, որտեղ քննարկվել են հեռահաղորդակցության ոլորտի կարգավորմանն առնչվող բազմաթիվ խնդիրներ:

Հանձնաժողովն ուսումնասիրել և դիրքորոշում է ներկայացրել Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության ընթացքում Եվրասիական տնտեսական միության համապատասխան մարմինների նիստերի օրակարգերում ընդգրկված հարցերի, կարծիքի ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներում բնական մենաշնորհների սուբյեկտների գործունեության կարգավորման համակարգի և պրակտիկայի համեմատական վերլուծության հաշվետվության ձևի նախագծի, Եվրասիական տնտեսական միության ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման հայեցակարգի), ինչպես նաև ԵՄ-ՀՀ համագործակցության նոր իրավական փաստաթղթի մշակման գործընթացում իրականացվող բանակցությունների շրջանակում հանձնաժողովի իրավասություններին առնչվող ԵՄ հրահանգների վերաբերյալ, իրականացրել է վերլուծություններ և ներկայացրել տեղեկանքներ: